


# ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ, ԴՈՒ՛ ՀԱՆԳՐՎԱ՛Ն, ԿԱՆԱՅՐ ՓԱՐՈ՛Ս

Posted on May 21, 2015 by Keghart



Category: [Opinions](#)



## «Հայկական վերածնունդ», 26 Մայիս 2015

**Ես ոչ անտուն եմ, ոչ էլ տարագիր,  
Ունեմ հանգրվան, ունեմ օթևան...**

**Աշոտ Գրաշի**

«Հայկական վերածնունդ» շարժման Փարիզի մասնաճյուղի պատասխանատու, «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Շանթ Ոսկերչյանը ս.թ. մայիսի 21-ին ՀՀ Ազգային անվտանգության ծառայության կողմից ամբողջ գիշեր պահվել է Չվարթնոց օդանավակայանում, արգելվել է նրա մուտքը Հայաստանի Հանրապետության տարածք:



Մինչ այդ արդեն բազմակի անգամ ՀՀ ժամանած ֆրանսահայ մտավորականին հայտարարել են անցանկալի անձ (persona non grata) և հերթական անգամ հայրենիք ժամանելուց 12 ժամ հետո իր կամքին հակառակ ետ ուղարկել Փարիզ:

## «Հայկական վերածնունդ», 26 Մայիս 2015

**Ես ոչ անտուն եմ, ոչ էլ տարագիր,  
Ունեմ հանգրվան, ունեմ օթևան...**

**Աշոտ Գրաշի**

«Հայկական վերածնունդ» շարժման Փարիզի մասնաճյուղի պատասխանատու, «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Շանթ Ոսկերչյանը ս.թ. մայիսի 21-ին ՀՀ Ազգային անվտանգության ծառայության կողմից ամբողջ գիշեր պահվել է Չվարթնոց օդանավակայանում, արգելվել է նրա մուտքը Հայաստանի Հանրապետության տարածք:



Մինչ այդ արդեն բազմակի անգամ ՀՀ ժամանած ֆրանսահայ մտավորականին հայտարարել են անցանկալի անձ (persona non grata) և հերթական անգամ հայրենիք ժամանելուց 12 ժամ հետո իր կամքին հակառակ ետ ուղարկել Փարիզ:

«Հայկական վերածնունդ» շարժումը խստիվ դատապարտում է քաղաքական Երևանի կողմից կատարած պետական վրեժխնդրությունը: Անբասիր կենսագրությամբ գործչի, բարեկամ Ֆրանսիայի քաղաքացու և հայ ժողովրդի նվիրյալ զավակի հանդեպ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության այդպիսի վարաբերմունքը որակում ենք որպես ՀՀ իշխանությունների կողմից գիտակցաբար իրականացրած քաղաքական և բարոյական երկակի զանցանք, որը դատապարտելի է ինչպես Հայաստան-Ֆրանսիա երկկողմանի հարաբերությունների վատթարացման, այնպես էլ՝ Հայրենիք – Սփյուռք հարաբերություններում չափազանց վտանգավոր անջրպետ ստեղծելու

առումով: Արդյո՞ք Շանթ Ոսկերչյանն է վտանգում Հայաստանի Հանրապետության անվտանգությանը, թե՞ օրեցօր իրենց համապետական և համազգային չափերի հանցանքներով հայրենի բնակչությանը կեղեքող ու արտագաղթի մղող իշխանությունները:

«Հայկական վերածնունդը» հայտնում է, որ ՀՀ ռեժիմին երբեք թույլ չի տա Հայկական Սփյուռքին ծրագրված բաժանելու երկու հատվածների՝ մի կողմում մեղալակիր և խոնարհ սփյուռքահայեր, մյուս կողմում՝ հայրենիքին խորթ ու անբաղձալի զավակներ: Շանթ Ոսկերչյան նվիրյալները վաղուց են ապացուցել իրենց հավատարմությունը հայրենիքին և սփյուռքյան իրենց ճակատագիրը կիսող ազգակիցներին, որը հստակորեն նշանակում է, որ այսօր Հայաստանի Հանրապետության պետականաշինությունը, զարգացումն ու անվտանգության ապահովումը առանց սփյուռքի այդ անձնուրաց հատվածի անմիջական մասնակցության, ուղղակի անհնարին է ու կտանի հանրապետության սրընթաց ինքնակործանման: Մենք գիտակցում ենք, որ ս.թ. մայիսի 21-ին ՀՀ ԱԱԾ մերկացրած դամոկլյան սուրը ներկայումս սպառնում է արտերկրում բնակվող յուրաքանչյուր ազնիվ և ընդդիմախոս հայի և որ բացառապես ոչ ոք դրանից ապահովված չէ: Ուստի դիմում ենք սփյուռքի մեր հայրենակիցներին՝ մեզ հետ միասնաբար պահանջել ռեժիմից՝ զերծ մնալ Սփյուռքի ընդդիմախոսների հանդեպ սկսված հալածանքներից և վերացնել Ոսկերչյանի մուտքը հայրենի երկիր փակելու որոշումը:

ՄԻ՛ ԱՐԳԵԼԵՔ ՆՎԻՐՅԱԼ ՀԱՅՈՐԴԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՀԱՅՐԵՆԻՔ

ԴԱ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ Ե

Հարգանքներով՝

«Հայկական վերածնունդ» շարժում

Ստորագրությամբ՝

- ՀՎ-Լոս Անջելեսի մասնաճյուղ
- ՀՎ-Բելգիայի մասնաճյուղ
- ՀՎ-Գերմանիայի մասնաճյուղ
- ՀՎ-Իսպանիայի մասնաճյուղ
- ՀՎ-Իտալիայի մասնաճյուղ
- ՀՎ-Լիբանանի մասնաճյուղ
- ՀՎ-Կանադայի մասնաճյուղ
- ՀՎ-Շվեդիայի մասնաճյուղ
- ՀՎ-Չեխիայի մասնաճյուղ
- ՀՎ-Ռուսաստանի մասնաճյուղ
- ՀՎ-Ֆրանսիայի մասնաճյուղ

